

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1**

ք.Երևան

«27» «06» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունների ժամանակավոր կատարող՝ Գրիգոր Հարությունյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Անգա-Տրանս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վիկտորյա Մելիք Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 12.01.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Վաճառող կազմակերպության՝ «Անգա-Տրանս» ՍՊԸ-ի, 23.06.2022թ.-ի թիվ Ա-021 գրությունը (ՔԿԾ մուտք՝ N5650) կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N2 հավելվածով՝ «Մատակարարման ժամանակացույց»-ով, թիվ 1 չափաբաժնով նախատեսված 1200 հատ «ամառային կարճաթև վերնաշապիկ և տաբատ» ապրանքատեսակից՝ 1095 հատի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և 2-րդ եռամսյակի փոխարեն, սահմանել մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2022թ.-ի հուլիսի 30-ը ներառյալ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/22-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն

ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն


Հ/Հ 900011175016

ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝

Գ. Հարությունյան

(ստորագրություն)



ՎԱՃԱՌՈՂ

«Անգա-Տրանս» ՍՊԸ

Հասցե՝ Կոտայքի մ.գ. Առինջ, Պ. Սևակի 6փ.7/1

Բանկ «Հայրիզնեսքանկ» ՓԲԸ

Հ/Հ 1150014086046042

ՀՎՀՀ 03556198

Տնօրեն՝

Վ. Մելիք-Սարգսյան

